

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Ավշենի Մ.Խամոյանի անվան հիմնական դպրոց

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Արագածոտնի մարզի Ջամշիլի հիմնական դպրոցի, Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցի և Ավշենի Մ.Խամոյանի անվան հիմնական դպրոցի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- 5) Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակներով հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Արագածոտնի մարզի «Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամենօր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրերն քոլ սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին, Արագածոտնի մարզի «Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ, Արագածոտնի մարզ, Ալագյազ համայնք, գ. Ավշեն 1-ին փողոց, 2-ենք 6 հասցեով

Տեղեկություններ համար դիմել՝

1. Էլ միրա Մարալչյան, հեռ 093232183,

2. Ալ մաստ Հսոյան, հեռ .098570445,

Էլ հասցե avshen@schools.am